

ՕՐՐԵԼՑԱՆ ԻՇԽԱՆՆԵՐԻ ԲՈՒՐԹԵԼՑԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ
ԵՎ ՍՅՈՒՆՑԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՈՆՏԵՐ ՍՏԵՓԱՆՈՍԸ

ՀԳԱ ակադեմիկոս Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ

Հաւգուցյալ ակադեմիկոս Լ. Խաչիկյանի սույն հոդվածը գրված է եղել իբրև նրա «Օր-
բելյան իշխանների Բուրթելյան դերդաստանը և Սյունյաց եպիսկոպոս պարոնաբ Ստեփա-
նոսը» հետազոտության մաս, ըստ որում այն հետազոտության սկիզբը՝ «Սյունյաց Օրբել-
յանների Բուրթելյան ընդերք» վերնագրով տպագրվել է «Բանբեր Մատենադարանի» № 9-ում
(1963, էջ 173—199), իսկ շարունակությունը անսխալ է, որը և խմբագրությանն է ներ-
կայացրել գիտնականի ղուտորը՝ Շուշանիկ Խաչիկյանը:

«Պատմա-բանասիրական հանդեսի» 1965 թ. 2-րդ համարում բանասեր
Պ. Խաչատրյանը հրատարակեց մի հաղորդում «Տաղ Ստեփանոսին Սիւնեաց
եպիսկոպոսին» կոչվող միջնադարյան ողբ-պոեմի մասին¹: Այդ գեղեցիկ
ստեղծագործության բնագիծը խիստ թերի վիճակում է հասել մեզ, ուստի
պատմվող ողբերգական անցուդարձերի բովանդակության, ժամանակի, սո-
ցիալական միջավայրի հետ տոնվող մի շարք էական հարցեր մթության
բողով են պատված: Ողբ-պոեմի կենտրոնական հերոսը՝ Ստեփանոս անու-
նով մի եպիսկոպոս, մեղսակից է գտնում իր խորթ մոր՝ Էւ-Խութուհ սպա-
նուկյանը. նրա շարկամները լուր են տարածում, որ նա մտադրություն ունի
սպանելու «Մեծ Դիւանի» կողմող իր հորը, ու պահանջում հոր համաձայ-
նությունը՝ «գի սպանցուք այսօր քո զորգին»: Հայրը տվալտանքի մեջ է,
տատանվում է մահվան մեծի առձակել, սակայն ի վերջո, երբ հայտարա-
րում են, որ «եթէ ոչ տայցես մեղ հրաման՝ մեռցիս ընդ նմին», նրանք
կորցում են հոր համաձայնությունը և սպանում անբ Ստեփանոսին:

Նահատակված տեղ Ստեփանոսի որդեկորույս մոր կսկիծն ու վիշաբ
պատկերված է գեղարվեստական կատարելությամբ: Հեղինակը, անառա-
կույս, օգտագործելով միջնադարյան լայկան կանանց ողբասացությունների
հնարանները, իր հերոսի եղբունական մահվան ախուր պատմությունը ազ-
դեցիկ ու աղեկատու է գործնում: Ուշագրավ են նաև ողբի այն տողերը, որով
բացահայտվում են նահատակվածի արտաքին ու ներքին բարեմասնություն-
ները և այլն:

Չեղբի տակ շունենալով հավաստի տվյալներ որոշելու, թե երբ և ինչ
հանգամանքներում են կատարվել բուրթելի հիմքում ընկած պատմական գեպ-
քերը, Պ. Խաչատրյանը մանրակրկիտ վերլուծության է ենթարկում խնդրո
առարկա ստեղծագործության պահպանված հատվածները, և առկա ակ-
նարկների խոր ուսումնասիրությամբ փորձում է լուսարանել մթագնված
այդ եղբուկյան դրվագները: Նա հանգում է այն եզրակացության, որ ողբ-
պոեմի մեջ արտացոլված միջնադարյան «Արեւելյան Հայաստանն է. ավելի
կոնկրետ՝ Պարսկաստանին սահմանակից Սյունյաց նահանգի Վայոց ձոր
գավառը, Նոյնաձորը, և մասամբ Ատրպատականի Թավրիզ քաղաքը՝ ավե-
լի վաղ անցյալի համար»²: Տեղ Ստեփանոսը հավանաբար Օրբելյան իշխա-
նական տան պայազատներից է: «Ողբի նյութը վերցված է տվալտական ըն-
տանիքի ոլորտից», սակայն ընտանեկան ու նեղ թվացող դրամայի մեջ
բեկմել է միջնադարի պատմության բնորոշ մի էջ: Հաճախ է պատահել, որ

1 Պ. Մ. Խաչատրյան. Միջնադարյան մի անսխալ ողբ («Տաղ Ստեփանոսին»).—
«Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2, էջ 197—204:

2 Նույն տեղում, էջ 202:

օտար տիրապետողների սլահանջով կամ այլ դրդասլատառներով հայ (և ոչ միայն հայ) ընդհանրական տների որոշ ներկայացուցիչներ, դիրքի ու պաշտոնի մղումով կամ մահվան սարսափից, դիմել են ոճրագործության՝ հաշվի չառնելով անգամ արհեստական կապերը»³։

Տեղի Ստեփանոսի և նրա հոր շուրջը համախմբված անձնավորությունների միջև ստեղծված թշնամությունը, խորթ մոր սպանությունն ու Ստեփանոսի եղբորական վախճանը Պ. Խաչատրյանը բացատրում է «հարազատ մոր կենդանության մեջ ալազգի խորթ մայր ունենալու՝ քրիստոնյային անպատվաբեր ու հակաբարոյական» վիճակով, Ողբի մեջ, նրա կարծիքով, «դեմ հանդիման կանգնել են հայրը՝ անձնական բարոյության ու դիրքի «խոհման» ընթացքով, և որդին՝ քրիստոնյա մարդու և հարազատ մոր սպանության շահախառնություններով»⁴։ Ողբում նկարագրված դեպքերը տեղի են ունեցել «XIV դարում, ոչ-ուշ քան մինչև XV դարի սկզբները»⁵, իսկ Ողբի հեղինակը, հավանաբար, եղել է Սյունյաց եպիսկոպոս ու անվանի բանաստեղծ Առաքել Սյունեցին։

Սրանք են, ահա, Պ. Խաչատրյանի ուսումնասիրության հիմնական հետևությունները։

Միջնադարյան հայ գրականության մեջ գեղարվեստական իր հատկանիշներով ու բովանդակությամբ պատմավոր տեղ գրավող այս ստեղծագործությունը Մատենադարանի «Բանբերի» ութերորդ գրքում անդրադարձել է տնվանի բանասեր Աս. Մնացականյանը, որը, տարիներ առաջ, օգտագործելով առկա ձեռագրերը, կազմել էր Ողբի համեմատական բնագրերը⁶։ Հրատարակելով Ողբ-պոեմի 3 տարբերակներ՝ ձեռագրական տարբերակներով, Աս. Մնացականյանը ընդարձակ իր ներածականում կանգ է առնում այդ ստեղծագործության հորինման ժամանակի, նրա հիմքում ընկած անցողիկության բովանդակության հետ առնչվող հարցերի վրա և հանգում այն եզրակացության, որ Պ. Խաչատրյանի կողմից «անտեսված է պոեմի քաղաքական, հայրենասիրական ոգին, ճիշտ չեն բացատրված նրա ստեղծման ժամանակը, հեղինակը, տաղաչափությունը» և այլն⁷։

Եվ ահա, մերժելով այն ամենը, ինչ ասված է տեղի Ստեփանոսի նահատակության հանդամանքների մասին Պ. Խաչատրյանի կողմից, քննարկվող բնագրի մեջ պահանջված մութ ակնարկներին տալով յուրովի մեկնաբանություն, Աս. Մնացականյանը փորձում է վերստեղծել Ողբ-պոեմի հիմքում ընկած պատմական եղելությունները՝ այսպես։

Տեղի Ստեփանոսի հայրը լոռեմում կոչված է «Մեծ Դիւանի», որ նշանակում է ոչ այլ ինչ, քան «Մահիւ Դիւանի» (աբղայի էին կոչվում մոնղոլական իլդանության հարկային ու ֆինանսական դործերի կենտրոնական ատյանի բարձրագույն պաշտոնյաները)։ «Այդ պաշտոնին հասած հայ գործիչ մեղ ծանոթ չէ և հավանաբար ոչ միայն չէ եղել, այլև չէր կարող լինել»⁸։ «Քանի որ Սահիպ Դիւանիները և մոնղոլական մյուս իշխողները նստում էին Թավրիզում, ուստի անհեղ պիտի ապրելիս լինեին նաև մեր պոեմի «Մեծ Դիւանի» իր նանանց և դավաճանների հետ»⁹։ Այդ «Մահիւ Դիւանի» կանանցից մեկը (Ստեփանոսի մայրը) եղել է քրիստոնյա, իսկ մեկ ուրիշը (պոեմի մեջ հիշատակված էլ-եռություն)՝ մահմեդական։ Այս վերջինը՝ «ինչպես կարելի է ենթադրել, հանդիսացել է մոնղոլ տիրողների ակնավոր տեղակալի»

³ Նույն տեղում, էջ 197։

⁴ Նույն տեղում, էջ 198։

⁵ Նույն տեղում, էջ 202։

⁶ Ասատուր Մնացականյան. Միջնադարյան հայրենասիրական մի նորահայտ առեմ («Տաղ Տեղի Ստեփանոսին՝ Սյունաց եպիսկոպոսին»)։—«Բանբեր Մատենադարանի», № 8, 1967, էջ 291—317։

⁷ Նույն տեղում, էջ 292։

⁸ Նույն տեղում, էջ 298։

⁹ Նույն տեղում, էջ 299։

մեկի դուստրը, և, հավանաբար, հարադատների և այլ բռնակալների դրդումով, մեծ եռանդով խառնվել՝ պետական գործերին: Նրա այդ գործունեությունը շատ ծանր է նստել «Ժողովրդի» վրա, որն էլ խնդրել ու համոզել է Ստեփանոսին՝ սպառնել նրան՝ որս: Ես բոլոր տեսակ չարիքների մոր»¹⁰: Եվ ահա, ահր Ստեփանոսը, հաշվի առնելով էլ-խուժելու «հասարակական վնասակարությունը», ի կապար է ածել «Ժողովրդի ցանկությունը»: Ըստ այդմ էլ այդ սպանությունը, ինչպես և պոեմում նկարագրված հետագա դեպքերը, կրել են «ոչ թէ բնականական բնույթ, այլ՝ հասարակական, քաղաքական», «այդ ամենի հիմքում ընկած են եղել բռնաախրական ծայրահեղ շարաշահումներ» ուղղված նվաճված ժողովրդի դեմ»¹¹ և այլն:

Ողբ-պոեմի առանցքը կազմող դեպքերը, ըստ Աս. Մնացականյանի, տեղի են ունեցել XIII դարի երկրորդ կեսին, քառս ամենաուշը՝ XIV դարի սկզբներին, Թավրիզ քաղաքում՝ «Մեծ Դիւանի» նստավայրում: Առաջել Սյունեցին, հարգելի րանասերի կարծիքով, չի կարող համարվել հեղինակը խնդրո առարկա ստեղծագործության, որովհետեւ 1387 թ. «տասնամյակներ առաջ» այն ղոյություն ունեւ: Այդ թվականին, հարմարեցվելով Սեբաստիայի Ստեփանոս եպիսկոպոսի նահատակությանը, ստեղծվել է պոեմի մի փոփոխակը, այն էլ արդեն «աղճատված, ժողովրդականացման ուղին բռնած» մի տարբերակի հիման վրա¹²:

Այսպիսով, միեւնույն դրսևսն ստեղծագործության պատմական բովանդակության, հորինման ժամանակի և հարակից հարցերի մասին երկու տարբեր բանասերներ հայտնել են իրարամերժ տեսակետներ, յուրովի մեկնաբանելով պոեմի մեջ առկա անորոշ ու մութ տվյալները:

Ողբ-պոեմի մեկնաբանները տարակարծիք չեն միայն մի հարցում՝ թե Հայաստանի որ նահանգում է ապրել և եպիսկոպոսական պաշտոն վարել նահատակված հերոսը՝ ահր Ստեփանոսը: «Դոսմը ընգորինակություններից մեկի խորագրում, ինչպես նաև բնագրի մեջ որոշակի առվում է, որ Ստեփանոսը Սյունյաց եպիսկոպոս և Սյունյաց իշխան է եղել: Հիշաաակություն կա նաև Եղեղնաձորի մասին: Ըստ այդմ էլ ուշագրավ այս ստեղծագործությունը ճիշտ վերլուծելու և հասկանալու համար անհրաժեշտ է, նախ և առաջ, մանրախույզ քննությանը ուսումնասիրել Սյունյաց նահանգի աշխարհիկ ու հոգևոր տերերի մասին պահպանված տպագիր ու անտիպ գրավոր հիշատակությունները, հույս ունենալով գտնել հավաստի պատմական վկայություններ տեղ Ստեփանոսի և պոեմի մյուս գործող անձանց մասին»:

* * *

Այժմ անդրադառնանք «Տաղ Ստեփանոսին՝ Սիւնեաց եպիսկոպոսին» ողբ-պոեմին:

Իվանե Բուրժուականի Սուլթանշահ-Ստեփանոս որդու մասին մեր ունեցած վկայությունները, նույնիսկ առանց լրացուցիչ փաստերի, միանգամայն բավարար են համոզվելու, որ խնդրո առարկա ստեղծագործության հերոսը նույն առ Սուլթանշահ-Ստեփանոսն է եղել: Այդ մասին, սակայն, հենց պոեմի մեջ հանդիպում ենք շատ որոշակի առված մի վկայության, որ վրիպել է և՛ Պ. Խաչատրյանի, և՛ Աս. Մնացականյանի ուշադրությունից:

Պոեմի մեջ ուշագրավ են որդեկորույս մոր դառը վիշաը պատկերող տողերը.

Լաց ասէր գերին,
Գըզուէր զիր որդին,

¹⁰ Նույն տեղում, էջ 301:

¹¹ Նույն տեղում, էջ 301, 303 և հտ:

¹² Նույն տեղում, էջ 292—293:

* Այդպիսի ուսումնասիրություն կատարել է այս հոդվածի հեղինակը. տե՛ս նրա Սյունյաց Օրբելյանների Բուրժուական ճյուղը.—«Բանբեր Մատենադարանի», Մ 9, էջ 175—199:

«Որդեակ իմ, որդեակ, սալթան շալ»,
Մալթա մասն և բաժին»¹³։

Ընդգծված «Սալթան շալ»-ը, անտարակույս, պետք է միացնել ա. կար-
դայ Սալթանշահ, որ, ինչպես գիտենք, Ստեփանոսի աշխարհական անունն
է եղել ու չի մոռացվել նրա կողմից նույնիսկ եպիսկոպոս դառնալուց հետո
(հիշենք, որ նա ինքնագիր իր հրատարակած առաջին ևս իրեն ներկայացրել է
որպես «Տէր Ստեփաննոս-Սալթանշալ»)։ Աս. Մնացականյանը այն ընկալել
է սոսկ որպես վշտահար մոր կողմից իր սիրասուն զավակի հասցեին շալ-
ված դավանանքի խոսքեր՝ «սոլթան» և «շահ»։

Ողբ-պոեմի մեջ, աննշան աղավաղումով. պահվել է նաև Ստեփանոս-
Սալթանշահի հոր՝ Իվանե Բուրթելյանի անունը։

Ստեփանոսին սպանել ցանկացող անձինք ներկայանում են նրա հորը
և շարախոսում, ասելով, որ նա, իր խորթ մորը՝ էլ-Խուսիլուին ապանելուց
հետո, մտադրվել է սպանել նաև քեզ։

Պոեմի մեջ հասած սլաոտամներից (ձիշտ կլինեք ասել՝ ընդօրինակու-
թյուններից) առաջինում է միայն ահապանվել այդ հատվածը, այն էլ աղա-
վաղված ձևով։

Գումարեալ եկին

Առ Մեծ Դիւանին,

Քի աղալ՝ սպանանէ զքեզ, յալսար։

Ահա քո որդին»¹⁴։

Գիտենք արդեն, որ «Մեծ Դիւանի» կոչված անձնավորությունը, րոտ
Աս. Մնացականյանի, Ստեփանոսի հոր պաշտոնի անունն է, անձնանունը
չի պահանջված։ Այդպես մտածելով հարգելի բանասերը «Մեծ Դիւանիին»
առաջնում է մոնղոլական իլդանություն բարձրաստիճանի աշտոնյա՝ Սա-
հայ-Դիվան, հայտարարում, որ այդ պաշտոնին հասած հայ գործիչ չէի եղել
և չեմ կարող լինել», և հասարակական, սոցիալական ու քաղաքական հիմ-
քեր է նշմարում տեղի Ստեփանոսի սպանության դրդապատճառների մեջ,
նրան համարելով աշխատավոր ու բռնադատված հայ ժողովրդի ռահբը
սլաոտանելու համար սլաքաբի կլած մի հերոս, կշտամբելով Պ. Խաչա-
տրյանին՝ «տեմի աղաքական, հայրենասիրական ոգին» անտեսելու մեջ։
«Մեծ Դիւանի» խճճված խնդիրը, սակայն, լուծվում է գարմանալի
դյուրությամբ։

Ձիշտ այնպես, ինչպես ձեռագրերում պահպանված «սալթան շալ»-ը
սրբագրվեց «Սալթանշահ» ձևով, «գումարեալ եկին առ Մեծ Դիւանին» նա-
խադասությունն էլ պետք է սրբագրել (ընդամենը մի «ե» դուրս նետելով)՝
«գումարեալ եկին առ մեծ Դիւանին» ձևով։

Անխմաստ կլինեք կրկին անդրադառնալ այն հարցին, թե ով էր Բուր-
թելի որդի, Բեշքենի եղբայր, Սալթանշահ-Ստեփանոսի հայր, Որոտանի
տեղի Իվանե յոյսանը (հիշենք, որ նրա անունը տառադարձված է սկզբնաղ-
բյուրներում տարբեր ձևերով՝ Իւանէ, Իվանիկ, Իւան, Ինանիկ, Նանիկ)։

«Տաղ Ստեփանոսին» ողբ-պոեմը տվյալ է ահապանել Իվանի երկու
կանանց՝ էլ-Խուսիլուի և Սալթանշահ-Ստեփանոսի անանուն մոր մասին։

Աս. Մնացականյանի կարծիքով «էլ-Խուսիլուն... հանդիսացել է մոնղոլ
տիրողների ականավոր տոհմներից մեկի դուստրը»։ Հառել է նշել, սակայն,
որ էլ-Խուսիլու, Խուսիլու, էլ-Խաթուն Թուրք-Թաթարական ծագում ունեցող
տասնյակ ու հարյուրավոր նման անձնանուններ լայնորեն տարածված էին
Հայաստանում XIV—XV և հետագա դարերում¹⁵։ Ուստի, անունից դատե-

¹³ «Բանբեր Մատենադարանի», № 8, էջ 310։

¹⁴ Նույն տեղում, էջ 308։

¹⁵ էլ-Խուսիլու անունն էր երևում, օրինակ, Ամիր-Ասադ Պոռշյան իշխանի կնիք, Գրիգոր
Տաթևացու «Ոսկեհորիկ» աշխատության պատվիրատու Խոջա Մասուտ-շահի մայրը և
որդիները։

լով, հնարավոր չէ որոշել որևէ անձնավորության, իսկ սույնը դեպքում՝ Իվանե Բուրթելյանի կնոջ, ազգային պատկանելությունն ու սոցիալական դիրքը՝

Իվանե—էլ-սուլթու զույգի զավակներին հնարավոր է զատել մյուս կնոջից ծնված զավակներից։

Սուլթանշահ-Ստեփանոսի մոր անունը, ասացինք, չի պահպանվել. այս կնոջից Իվանեն ունեցել է միայն մի որդի՝ Սուլթանշահին։ Մոր բերանով պոեմի հեղինակը որոշակի հայտնում է. «Աստուած, դու զիտես, որ էս մէկս, էլ որդի յունիմ»¹⁶։ Տարարախտ աս կնոջո «գերի» է կոչում հեղինակը («լաց ասէր գնդին, գրդունը զէր որդին»)։ Տնոր բառգիրք հայկազեան լեզուին նշանավոր բառարանը սյդ բառին առիս է «կալանաւոր, վտարանդեալ յօտարութիւն, կամ յափշտակեսլ ի ստրկութիւն...» իմաստները։ Կարելի է, ուրեմն, հետևել, որ Սուլթանշահի մայրը Իվանե Բուրթելյանի օրինավոր կինը չի եղել, այլ սոսկ «գերին»՝ հարձը։

Հետ ասում Իվանեի էլ-սուլթու կնոջից ծնված զավակներն են Գորգուն, Սմբատ և Բուրթել եղբայրները։ Էլ-սուլթուն և անանուն հարձը, անտարակույս, ապրել են միաժամանակ։ Սվ այս հանգամանքը զարմանալի չպետք է թվա քրիստոնյա հայ մի ֆեոդալի համար։ Հիշենք, որ Իվանեի մեծ պապ Տարսապիճ Օրբելյանը կնության առավ խաչենի իշխան Զալալի դուստր Մինախաթունին «առ կենօր առաջի ամուսնոյն»¹⁷։

Սուլթանշահ-Ստեփանոսը երիտասարդ հասակում որոշ տարիներ անց է կացրել Թավրիզ քաղաքում. այդ մասին շատ պարզ ցուցում կա պոեմի մեջ.

Թարվիզ քաղաքին

Ի մեծ մէղանին

Մէկ մանուկ լըզալու. որ քաշէր

Հաղեղ պարոնին։

Գարվիզ քաղաքին,

Մէջ շատ հեծելին

Զհուլում ու զուրաւի սու առնէր

ՂԱԵՍՏԱՐԱՆԻՆ¹⁸։

Այս տղանը կասկած չեն թողնում, որ պատանի Սուլթանշահը պատանի արտավել է քրդես զինվորական ու փայլել Թավրիզում իր տարեկիցների մեջ՝ դիպուկ աղեղնածիլի, հզոր բազկի տեր ու խոստումնալից ռազմիկի համբավ ձեռք բերելով։

Սուլթանշահի հորեղբայր Բեշեն իշխանի կյանքի արեգորությունը շարադրելիս Ի. Կատել ենք, որ նա 1337 թ., հավանաբար որպես Սյունյաց զորախմբի շրջանաւարտ, գտնվում էր իլդանության հին ու նոր մայրաքաղաքներում՝ Թավրիզում և Սուլթանիսում¹⁹։ Պետք չէ կասկածել, որ նրա հետ եղել են նաև Բուրթելյան այլ պայազատներ, որոնցից էր նաև մեր Սուլթանշահը։ Այս ենթադրությունը ավելի հավանական է դառնում, երբ ուշադրություն ենք դարձնում Սուլթանշահի ինքնագիր հիշատակագրության մի ուշադրավ առանձնահատկության վրա։ Ընդամենը մի քանի տող գրավոր այդ լրության մեջ նա, անհարկի, հիշատակում է ոչ միայն իր հոր ու պապի (Իվանեի ու Բուրթելի) անունները, որ լիովին բավարար էին նրա ու լինելը մատնանշելու համար, այլև անհրաժեշտ է համարում սովելի շնչոտ՝ արդեն վախճանված իր հորեղբոր՝ Բեշենի անունը²⁰։ Գուցե անդիտակցաբար նա

¹⁶ «Բանբեր Մատենադարանի», № 8, էջ 310։

¹⁷ Ստեփանոս Օրբելյան. Պատմութիւն տանն Սիսական. Բեճեք, 1910, էջ 424։

¹⁸ «Բանբեր Մատենադարանի», № 8, էջ 316։

¹⁹ «Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 177։

²⁰ Տե՛ս նույն աղբյուր, էջ 179։

իր հոգեհարադատությունն է ցույց տվել հորեղորոր նկատմամբ, որի ձեռքի տակ թավրիղ քաղաքում գաստիարակվել է որպես ղինվորական:

Բեռքեն իշխանին իր հայրենական կալվածքներից բաժին էր ընկել Եղեգնաձորը. նա ռեներ մեկ որդի՝ Էլիկում-Կուկան, որ 1349-ից մի քանի տարի տուաց, ամուսնանալով Ամատա Շահուռեցի իշխանի նաթիլ դստեր հետ, ժառանգել էր Շահուռեցիների կալվածքները: Կարելի է, ուստի, կուհել, որ Բեռքենը իր Սուլթանշահ եղբորորդուն դուրգուրում էր նաև որպես իր կալվածքների ապագա ժառանգորդ (չմոռանանք, որ պոեմի մեջ աեր Սահփանոսը մեծարված է որպես «իշխան Սիւնեաց»):

Սուլթանշահի ճակատադիրը, սակայն, այլ կերպ էր գծված:

Իվանե Բուրթեյանի էլ-Խուբլու կնոջ սաղրանքով, հավանաբար, հայրենական կալվածքների մասնատրման որոշված կարգը փոխվում է հոգուտ էլ-Խուբլուի դավակների և ի վնաս Սուլթանշահի, որին պարտագրում են եկեղեցականի սքեմ հագնել ու քավարարվել Սյունյաց եպիսկոպոսի հոգեվոր պաշտոնով: Եղեգնաձորը բաժին է տրվում Իվանեի և էլ-Խուբլուի Գորգուն որդուն:

Կարծում ենք, որ մի կողմից՝ Սուլթանշահ-Ստեփանոսի ու մյուս կողմից՝ էլ-Խուբլու իշխանուհու և նրա որդիների թշնամության գրդապատճառը պետք է որոնել հենց հայրենական կալվածքների տիրակալման հսմար ծավալված վեճերի մեջ: Տեղին է հիշել Մատթեոս Զուղայեցու սրամիտ մի դիտողությունը այս օտանակաշրջանի հայ իշխանների մասին. «Այժմ մնացեալ սուտ իշխանքն Հայոց,—գրել է նա,—դմիմեանց ջիւս հատանեն և զարմանալի ևս է, զի բոլոր երկիրս աւեր՝ և վասն սուերածիս կռուին»²¹:

Այս դեպքում, սակայն, խնդիրը չի փակվում կոպով ու թշնամությամբ. Սուլթանշահը, իր համակիրների խորհրդով, սպանել է տալիս էլ-Խուբլուին: Խորթ մոր նկատմամբ թշնամությունը վերաճել կարող էր ատելության՝ հարադաա մոր նվաստ ու ստորագաս վիճակի գիտակցությամբ ու թելսրգրանքով, ինչպես իրավացիորեն ակնարկել է Պ. Խաչատրյանը²²:

Երբ Սուլթանշահ-Ստեփանոսի արյունաշաղախ գլուխը նետում են մոր դիրկը, նա աղերսում է աստծուն պատուհասել որդուն սպանողին.

Ջգոզն արեամբ լցեալ և խնդրէր .

Վրէժ սպանողին:

Աստծո արգար դատաստանը չի ուշանում.

Հուր բորբոքեցաւ

Յեղեգեց ձորին.

Հրդհեալ կիզեաց զամենայն

Բնակիւք երկրին²³:

Պարզ է, որեմն, որ Եղեգնաց ձորում պետք է փնտրել ոճրագործին, իսկ Եղեգնաձորի իշխանը Գորգուն Բուրթեյանն էր:

Եվս մի վկայություն՝ ոգբ-պոեմից.

Վայդեցին դարիւն

Տէր Ստեփանոսին.

Արիւն գոլէր առ Քրիստոս՝

Որպես ղԱրելին²⁴:

Շատ որոշակի է առված. Արելին սպանեց իր եղբայր Կայենը, ըստ այդմ Ստեփանոսին ևս սպանել է իր եղբայրներից մեկը, որ վերահիշյալ տվյալ-

²¹ «Բանբեր Մաանադարանի», X 3, է, 71:

²² «Պատմա-բանասիրական հանդես», 1965, Մ 2, էջ 198:

²³ «Բանբեր Մատենադարանի», Մ 8, է, 310:

²⁴ Նույն տեղում, էջ 308:

ներով հղել է Եղեգնաձորի տեր Գորգուն իշխանը, Ստեփանոսի համահայր եղբայրը։ Ավելացնենք, որ նա արայնակ չի եղել, այլ զործել է «խառնիճաղանջ» և «աստուածուրաց» մարդկանց զործակցությամբ, ոչոք մեկ անգամ էլ կոչվում են «դինուորքն շարին»։

Որտե՞ղ է կատարվել Սուլթանշահ-Ստեփանոսի սպանությունը։ Աս. Մնացականյանի կարծիքով՝ Թավրիզում, բայց այս եզրակացությունը ասորինակ է թվացել նույնիսկ հեղինակին. «Պոեմի պակասավորություն պատճառով, — դրել է նա, — լրիվ չի ընկալվում, թե Ստեփանոսը Մյունխենում գտնվելով, ինչպե՞ս եղավ, ուր պատժվեց «Մեծ Դիւանի» նստավայրում՝ Թավրիզում»²⁵։

Վերահիշյալ փաստերի լույսի տակ անիմաստ է դառնում նման հարցապնդումը։ Ստեփանոսն սպանվել է Եղեգնաձորում, նույնիսկ հայանի է, թե ուր է թաղված նրա խոշտանգված մարմինը։

Թումա Սպատկերտցի դրիշը 1423 թ. Հերմոնի վանքում օրինակել է Գրիգոր Տաթևացու «Հարցմանց դիրքը»։ աղ ձեռագրի հիշատակարանում նա հայտնում է, որ աշխատել է «ի յերկիրն Վալուձոր, ի յանապատն Հերմոնի վանք կոչեցեալ, ընդ հովանեաւ արքայն Գրիգորի մեր Լուսաւորչին, և սուրբ վարդապետացն, որ անդ հանգուցեալ կան՝ Տէրաւոր վարդապետն, Գրիգոր վարդապետն, Բարսեղ վարդապետն, եւ ի Սուլթանշահն»²⁶։

Այսպիսով, պարզվում է, որ նահատակ Սուլթանշահ-Ստեփանոսի անունը հանդիպում է Եղեգնաձորի Հերմոնի վանքում։

Իսկ ե՞րբ է կատարվել սպանությունը։ Ըստ Աս. Մնացականյանի՝ XIII դարի երկրորդ կեսին կամ «առնվազն» XIV դարի սկզբներին։ Այս եզրակացությունն արդյունք է, հիմնադրամ, ողբ-սոսնի բովանդակության ողբո՞ղ անձանց մասին արտահայտած թյուր տեսակետների, ժամանակի հարցը պարզելու նստակեղ մեղ է բերված նաև մի «փաստ», որի համաձայն 1387 թ. արդեն դոկություն է ունեցել մեր պոեմի «աղյափոխված ու վերամշակված» և Սեբաստիայի Ստեփանոս եպիսկոպոսի նահատակությանը հարմարեցված մի փոփոխակ։ Ցավոք, հիմնավոր չէ Աս. Մնացականյանի նաև այս եզրակացությունը։

Սեբաստիայի եպիսկոպոս Ստեփանոսի նահատակությանը հարմարեցված փոփոխակը հրատարակված է առաջին անգամ Ղ. Ալիշանի կողմից 1848 թ.²⁷։ Ալիշանը ոչ մի խոսք չի ասել այդ հրատարակության համար հիմք ծառայած ձեռագրի, ինչպես և այդ քերթվածի հոդինման ժամանակի մասին. նա սոսկ նշել է, որ Սեբաստիայի եպիսկոպոս Ստեփանոսը նահատակվել է 1387 թ.։ Նրա նահատակության պատմությունը հրատարակված է «Հայոց էոր վկաներ» ժողովածուի մեջ 24 ձեռագիր Հայսմավուրքների բաղադրությամբ²⁸։ Սն՝ ահա, այդ 24 Հայսմավուրքներից և ոչ մեկում, վկալաբանություն կից, չկա մեղ հետաքրքրող պոեմի փոփոխակը։ Պարզ է, ուրեմն, որ 1387 թ. անարդարացի և իդուր է հրապարակ բերված Ստեփանոսի ոճրապարտ սպանության ու պոեմի ստեղծման ժամանակը պարզելու անկալությունը։

Սուլթանշահ-Ստեփանոսի ինքնագիր հիշատակարանը շարադրված է, մեծ հավանականությամբ, 1366 թ., իվանե Բուրժույանը կենդանի էր դեռևս 1377-ին (դրանից հետո շատ օրված չպետք է լինի)²⁹։ Թվական այս տրվյալների բավարար հլմք են հանդիսանում ենթադրելու, որ Սուլթանշահի

²⁵ Նույն աւղում, էջ 303։

²⁶ Երաւագնւմ, ձեռ. Մ 2181, էջ 681 (հմտ. Ժն, I, 301)։ Հիշատակարանում «Սուլթանշահն» տեղում դրի վրիպակեղ գրված է «Սուլթանէշահն» առամառ ձեռով։

²⁷ «Բաղմավագ», 1848, էջ 341—343։

²⁸ Հայոց էոր վկաներ, գիտական հրատարակություն, աշխատություն Զ. Մանանդյանի և Զ. Աւագյանի. Վաղարշապատ, 1903, էջ 137—150։

²⁹ Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», Մ 9, էջ 177—178։

սպանությունը տեղի է ունեցել XIV դարի 60-ական թթ. վերջերին կամ 70-ական թթ.:

Այժմ անդրադառնանք ողբ-պոեմի հորինման ժամանակի ու հեղինակի հարցին: Հեղինակի մասին նոր ասելիք չունենք. կարծում ենք, որ չի սխալվում Պ. Խաչարյանը, երբ ամփոփում է իր հոգվածի այս հարցին նվիրված բաժինը այսպես. «Ողբի տաղաչափական, դեղարվեստական-պատկերավորման և քերականական նշված առանձնահատկությունները, այսպիսով, որոշ հիմք են տալիս ենթադրելու, որ նրա հեղինակը, թերևս, Առաքել Սյունեցին է, որի գրական գործունեության եռուն շրջանը, համաձայն մեզ հասած տվյալների, համընկնում է XV դարի առաջին տասնամյակին»³⁰,

Առաքել Սյունեցին իր սյանավոր «Աղամգիրը» հորինել է 1403 թ. Պեաք չէ տարակուսել, որ նա ստեղծագործական աշխատանքի բազմամյա փորձ է ունեցել այդ բարդ երկը շարունակելու: Եվ կարծես որևէ արդիվ չկա «Տաղ Սահփանոսին» ողբ-պոեմի հորինման ժամանակը նկարագրված ողբերգական դեպքերին մոտեցնելու համար:

Այնուամենայնիվ մենք հակված ենք ավելի տեական անջրպետ տեսնելու պոեմում պատմվող անցողորձերի և նրա հորինման ժամանակի միջև:

Ոճի բնույթը կապարդ կամ ոճրագործին նպաստող անձինք Սյունյաց նշանավոր իշխաններն են եղել: Ժամանակի գրչի մարդիկ հարմար չեն դատել և, դուցե, երկուդ են կրել իշխանավորների տմարդի արարքները բացահայտող այդ դեպքի պատմությունը դրի անցկացնելուց, քանի դեռ կենդանի էին գործող անձինք՝ Իվանեն, Գորգունը և նրանց կուսակիցները: Ժամանակ էր պետք այդ ողբերգությունը դրավոր խոսքով պատմությանը հանձնելու համար: Եվ այդ ժամանակը հասունացել էր, ըստ երևույթին, XV դարի սկզբներին:

Ամփոփենք արդյունքները. «Տաղ Սահփանոսին» Սիւնեաց եպիսկոպոսին» ողբ-պոեմի հերոս-նահատակը՝ Սյունյաց մեծ իշխան Բուրթեյի թոռ, Իվանենի որդի Սուլթանշահ-Ստեփանոս պարոնտերն է: Նրա խորթ մոր՝ Էլեոնիկուի սպանությունը և իր նահատակությունը, ամենայն հավանականությամբ, արդյունք է Իվանեն Բուրթեյյան իշխանի տարրեր կանանցից ծնված որդիների միջև ժառանգական սաացվածքները բաժանելու հողի վրա ծագած վեճերի ու թշնամության: Սահփանոսի սպանությունը պատարվել է XIV դարի 60—70-ական թթ. (հավանարար՝ 1366—1377 թթ. միջոցին), և այդ ձորի Նղեֆնաձոր դավառում, Իվանեն Բուրթեյյանի Գորգուն որդու նախաձեռնությամբ: Սուլթանշահ-Ստեփանոսի աճյունը հանգչում է Հերմոնի վանքում:

СЕМЕЙСТВО БУРТЕЛЯНОВ КНЯЖЕСКОГО РОДА ОРБЕЛЯН И СЮНИЙСКИЙ ЕПИСКОП ПАРОНТЭР СТЕПАНОС

Академик АНА Л. С. ХАЧИКЯН

Резюме

Вопросы, связанные с идентификацией персонажей средневековой поэмы «На смерть Сюнийского епископа Степаноса», все еще остаются спорными, хотя ее специальным исследованием занимались П. Хачатрян и А. Мнацаканян. Некоторые коррективы, предлагаемые в статье, позволяют заключить, что Степанос является внуком великого Сюнийского князя Буртеле, сыном Иванэ и известен в источниках по имени Султанцах-Степанос. Его убийство датируется 60—70 гг. XIV в., похоронен же он в монастыре Эрмона.

³⁰ «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2, էջ 204: